Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Իգնատի Առաքելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն) 2018 թվականի փետրվարի 22-25-ը
4.	Հրավիրող կողմը	Ֆրանսիայի Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարար Ստեֆան Տրավեր
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	- Գյուղատնտեսության բնագավառում երկկողմ համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկում - Մասնակցություն գյուղատնտեսության միջազգային ցուցահանդեսին - Մասնակցություն գյուղատնտեսության նախարարների համաժողովին՝ «Արժեքների ստեղծում և բաշխում գյուղատնտեսական սննդի շղթայում» թեմայով
6.	Քննարկված թեմաները	գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցության հետագա զարգացմանն առնչվող հարցեր
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Հանդիպում Ֆրանսիայի Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարար Ստեֆան Տրավերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցությանն առնչվող հարցերը, մասնավորապես 2014թ. ստորագրված հուշագրում ամրագրված բնագավառներում, ինչպես նաև գինու աշխարհագրական նշումներով գյուղատնտեսական ապրանքների համակարգի ներդրմանն ուղղված հնարավոր աջակցությանը, ֆրանսիական մասնագիտական ուսումնարանների՝ փորձարարական ֆերմաներով, Հայաստանում մասնաճյուղ բացելու

		հնարավորությանը, փոքր հողակտորներ ունեցող գյուղացիների համար նպաստավոր՝ բարձր եկամտաբերություն ունեցող գյուղատնտեսական կուլտուրաների մշակման հարցում (մասնավորապես, եթերային յուղերի ստացման համար մշակաբույսեր, արդյունաբերական կանեփ) ֆրանսիական կողմի աջակցությունը և դրանցում մասնագիտացած ֆրանսիական ընկերությունների ներգրավմանն առնչվող հարցեր: Քննարկվել են նաև ՀՀ-ԵՄ համաձայնագրի իրականացման վերաբերյալ, մասնավորապես կոնյակի վերաբրենդավորման հարցերը: Հանդիպում Զարգացման ֆրանսիական գործակալության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գործակալության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, ԵՄ դրամաշնորհով գործակալության կողմից իրականացվելիք «Irrigated Armenia» ծրագրի ստորագրման հարցը: Քննարկվել են նաև ֆրանսիական մասնավոր բիզնեսի կողմից Հայաստանում ներդրումների իրականացման հնարավորությունը, մասնավորապես անասնաբուծության և սառնարանային տնտեսությունների բնագավառներում: Առաջարկվեց նաև քննարկել ԵՄ կողմից 2019-2020թթ. ստացվելիք 15 մլն դրամաշնորհից որոշ միջոցներ ֆրանսիական ընկերություններին տրամադրելու հնարավորությունը, որոնք գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և ներդրումներ կկատարեն: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ գործակալության պատվիրակությունը այցելելու է Հայաստան 2018 թվականի մարտի վերջին՝ ծրագրի ուղղությունները և ժամկետները հստակեցնելու, ինչպես նաև հնարավոր նոր նախաձեռնությունները քննարկելու նպատակով:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Ցուցահանդես կատարած այցի ընթացքում կայացել է հանդիպում սերմերի և տնկիների միջմասնագիտական ազգային միավորման (GNIS) ներկայացուցչի (միավորում է սերմերի և տնկիների ոլորտի բոլոր դերակատարներին) հետ, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2018 թվականի հունիսին միավորման անդամ հանդիսացող որոշ ձեռնարկությունների Հայաստան այցելության վերաբերյալ՝ հնարավոր ծրագրեր իրականացնելու հնարավորությունները քննարկելու նպատակով:

		Կայացել է հանդիպում Ռուսաստանի Դաշնությունում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության գյուղատնտեսության հարցերով խորհրդական Կատյա Ռուանեի հետ (ով պատասխանատու է նաև Հայաստանի համար), պայմանավորվածություն է ձեռք բերվել հանդիպում կազմակերպել ՌԴ-ում ներկա «Danon» և «Lactalis» ընկերությունների ղեկավարների հետ՝ Հայաստանում մասնաճյուղ բացելու, ներդրում կատարելու հնարավորությունները քննարկելու նպատակով: Ցուցահանդեսի շրջանակներում կայացել են նաև հանդիպումներ՝ - Ֆրանսիայի լեռնային Massif central շրջանի լեռնային ոչխարների արտահանմամբ զբաղվող ընկերության ներկայացուցիչների հետ, քննարկվել են հայաստանյան պայմաններին հարմար ցեղատեսակների Հայաստան ներմուծելու հնարավորությունները: - Տոհմային կենդանիների տեսակների առևտրով զբաղվող ընկերության ներկայացուցիչների հետ, քննարկվել են համագործակցություն ծավալելու հնարավորությունը՝ Հայաստանում գործող անասնապահական ֆերմայի հենքի վրա: - «Անասնապահության ինստիտուտի» միջազգային տեխնիկական համագործակցության գրասենյակի ղեկավար հետ (Insititut d'élevage BCTI), քննարկվել են անասնապահության բնագավառի մասնագետների վերապատրաստման, ինչպես նաև նոր տոհմատեսակների ստեղծման բնագավառում համագործակցության հարցերը: - Շրջակա միջավայրի և գյուղատնտեսության համար գիտությունների և տեխնոլոգիաների հետազոտական ազգային ինստիտուտի (IRSTEA) ներկայացուցիչների հետ, քննարկվել են ոռոգման արդյունավետ միջոցների և նորարարական լուծումների կիրառման հարցերը: - «M2I-Life sciences» ընկերության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվել է պեստիցիդներին փոխարինող արտադրանքը (Ֆերմոն)՝ հատուկ հոտ, որը ձգում է միջատների արուներին դեպի ծուղակը և ոչնչացնում:

9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Այցի արդյունքում որոշվեց կազմակերպել հանդիպում Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտի հետ, ներկայացնել բոլոր պայմանավորվածությունները և կազմել հետագա գործողությունների պլան:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	07.02.2018թ.